Համախմբված ֆինանսական հաշվետվություններև Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2018թ.

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված

ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

ՖՀՄՍ 16-ի *«Վարձակալություն» կիրառում*

Ինչպես նկարագրված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների 2.5 ծանոթագրությունում, Խումբը վաղաժամ կիրառել է ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություն»: Նոր ստանդարտը կիրառվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ: Խումբը որոշել է չվերաներկայացնել նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի և ճանաչել ստանդարտի սկզբնական կիրառման կուտակային ազդեցությունը սկզբնական կիրառման ամսաթվով, այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ով:

Ըստ մեզ՝ ՖՀՄՍ 16-ի կիրառումն առանցքային հարց է, քանի որ ստանդարտի կիրառումը Խմբի ղեկավարությունից պահանջում է ձևափոխել բիզնես գործընթացները, ներմուծել փոփոխություններ SS համակարգում, մշակել վերահսկողության նոր ընթացակարգեր: ՖՀՄՍ 16-ի կիրառումն էական ազդեցություն է ունեցել համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ղեկավարությանից պահանջել է նշանակալի դատողություններ անել, մասնավորապես, որոշելու, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ ներառում է վարձակալության պայմանագիր, ինչպես նաև վարձակալության ժամկետները և զեղչման դրույքները:

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ մեր ընթացակարգերը ներառել են կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության քննարկումը և այն հարցը, թե արդյոք այն համապատասխանել է ՖՀՄՍ 16-ին: Մենք վարձակալության պայմանագրերի ընտրանքի հիման վրա ստուգել ենք մանրամասները՝ որոշելու կիրառված հաշվապահական ձևակերպումների, արված գնահատումների և դատողությունների պատշաճությունը:

Ի լրումն, մենք ուսումնասիրել ենք համապատասխան գրանցամատյանում վարձակալության պայմանագրերի գրանցման գործընթացների նկատմամբ ներքին վերահսկողությունը և օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների չափման ժամանակ անհրաժեշտ հիմնական մուտքային տվյալների բացահայտումը:

Մենք նաև վերանայել ենք բացահայտումների ամբողջականությունը և գնահատել ենք դրանց համապատասխանությունը համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ համաձայն նոր ստանդարտի պահանջների:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել

Grant Thornton

Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

6 հունիսի 2019թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	33,404,594	33,591,391
Օգտագործման իրավունքով ակտիվներ	5	6,934,139	-
Ոչ նյութական ակտիվներ	6	6,550,477	4,838,666
Չապահովված փոխառություններ	7	638,689	17,594,904
Հետաձգված հարկային ակտիվներ	8	1,304,538	831,134
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	1,109,290	407,265
Բանկային ավանդներ	10	967,500	-
		50,909,227	57,263,360
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	1,932,776	2,074,381
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	9,914,032	16,581,386
Չապահովված փոխառություններ	7	3,450	8,280
Կարճաժամկետ վարկեր աշխատակիցներին		289,332	260,236
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար		308	1,378,537
Բանկային ավանդներ	10	8,230,693	4,923,812
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	12	27,319,950	3,114,803
		47,690,541	28,341,435
Ընդամենը ակտիվներ		98,599,768	85,604,795

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	13		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		80,726,900	76,796,626
		81,359,400	77,429,126
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	14	5,983,578	-
Պայմանագրային պարտավորություններ	15	106,435	108,053
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	890,100	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ		-	585,003
		6,980,113	693,056
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	14	1,301,990	-
Պայմանագրային պարտավորություններ	15	1,440,582	1,670,593
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	7,517,683	5,812,020
		10,260,255	7,482,613
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		98,599,768	85,604,795

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2019թ. հունիսի 6-ին:

Ռալֆ Յիրիկյան
Գործադիր տնօրեն

Գայանե Կանանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պայմանագրային հասույթ			
Շարժական կապի ծառայություններ	17	51,032,925	51,757,502
Ֆիքսված կապի ծառայություններ		1,538,015	1,326,256
Ապրանքների վաճառքից հասույթ		5,198,269	3,677,280
Այլ հասույթ		128,039	87,534
Այլ եկամուտ			
Այլ գործառնական եկամուտ		608,202	700,803
		58,505,450	57,549,375
Մաշվածություն և ամորտիզացիա		(14,235,819)	(12,044,640)
Միջազգային փոխկապակցման և ռոումինգի ծախսեր	18	(7,043,368)	(7,504,384)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(7,440,460)	(6,807,088)
Ցանցի շահագործման այլ ծախսեր	19	(5,197,696)	(7,018,323)
Կառավարման և խորհրդատվական վճարներ		(2,545,351)	(2,631,701)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(4,723,293)	(3,257,118)
Այլ գործառնական ծախսեր	20	(6,269,682)	(6,256,803)
		(47,455,669)	(45,520,057)
Գործառնական գործունեությունից շահույթ		11,049,781	12,029,318
Ֆինանսական եկամուտ	21	794,330	633,353
Ֆինանսական ծախս		(854,952)	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	22	81,623	(72,950)
Շահույթ մինչև հարկերը		11,070,782	12,589,721
Շահութահարկի գծով ծախս	23	(2,429,967)	(2,793,104)
Տարվա շահույթ		8,640,815	9,796,617
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		8,640,815	9,796,617

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	83,500,009	84,132,509
Տարվա շահույթ	-	-	9,796,617	9,796,617
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	9,796,617	9,796,617
Շահաբաժիններ	-	-	(16,500,000)	(16,500,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(16,500,000)	(16,500,000)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	76,796,626	77,429,126
Նոր ՖՀՄՍ-ների կիրառման հետ կապված ճշգրտում	-	-	(210,541)	(210,541)
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	76,586,085	77,218,585
Տարվա շահույթ	-	-	8,640,815	8,640,815
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	8,640,815	8,640,815
Շահաբաժիններ	-	-	(4,500,000)	(4,500,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(4,500,000)	(4,500,000)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	80,726,900	81,359,400

ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառումը հանգեցրել է կուտակված արդյունքում 210,541 հազար դրամ ճշգրտման:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	8,640,815	9,796,617
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	14,250,757	12,091,215
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	357,263	319,181
Շահութահարկի գծով ծախս	2,429,967	2,793,104
Ֆինանսական եկամուտ	(794,330)	(633,353)
Ֆինանսական ծախս	854,952	-
Շնորհներից եկամուտ	(138,767)	(74,649)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(81,623)	72,950
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	25,519,034	24,365,065
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	5,594,946	6,399,992
Պաշարների փոփոխություն	141,605	(334,222)
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(29,096)	(195,060)
Պայմանագրային պարտավորությունների փոփոխություն	(231,629)	(249,131)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,401,614	(749,689)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	32,396,474	29,236,955
Վճարված տոկոսներ	(854,952)	-
Վճարված շահութահարկ	(1,525,142)	(1,019,300)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	30,016,380	28,217,655

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(13,381,947)	(7,785,727)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	69,786	228,110
Տրամադրված փոխառությունների մարում	10,126,645	8,276
Ստացված տոկոսային եկամուտ	7,657,213	217,712
Կատարված ավանդներ	(11,118,655)	(10,845,370)
Մարված ավանդներ	6,828,830	6,382,104
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	181,872	(11,794,895)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	(1,541,485)	-
Վճարված շահաբաժիններ	(4,500,000)	(16,500,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(6,041,485)	(16,500,000)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	24,156,767	(77,240)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	48,380	5,113
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	3,114,803	3,186,930
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	27,319,950	3,114,803

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: